ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՄԱՅՐ ԹԵՐԵԶԱՅԻ ՔՈՒՅՐԵՐ» ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻՆ

24.11.2025 16:20

Շարունակելով մեր ավանդույթը՝ ցանկանում ենք 2025թ. դեկտեմբերի 23-ին՝ ժամը 16:00-ին, այցելել Երևանում «Մայր Թերեզայիքույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատուն, որտեղ խնամքի տակ են գտնվում ծանր հիվանդ երեխաներ, որոնցից ծնողները հրաժարվել են: Մանկատան երեխաներին օգնություն տրամադրելու, ինչպես նաև նրանց անձամբ այցելելու ցանկություն հայտնած անձինք կարող են info@advocates.academy էլ. հասցեին նամակ ուղարկել կամ անհրաժեշտ իրը ստացականով հանձնել Փաստաբանական ակադեմիայի ընդունարանի պատասխանատուին:

Մանկատան երեխաներին անհրաժեշտ են հետևյալ իրերը՝ (անսահմանափակ քանակի)

-սպորտային հագուստ (6ամս., 1-3 տ, 6 տ.,15տ.)
-գիշերազգեստ (7տ.-15տ.)
-ծածկոց անկողնային (120սմ*170սմ)
-անկողնային հավաքածու (100սմ*180սմ) (90սմ*200սմ)
- Similac,կաթնային խառնուրդ- N 1, N 4
- BEBI շիլաներ (каша) 6+
- Huggies, Libero, Puffies տակդիրներ (5,6,7չափերի)
-թարմ մրգեր և բանջարեղեն
- լոգանքի պարագաներ (գել, օճառ...)-Johnson’s Baby
- լվացքի գել
-կրեմ topi
- տակդիրներ (подкладки,underpads 60*90 սմ)
- թաց անձեռոցիկներ
- շոկոլադե սմայլիկներ գրանդ քենդի
- շոկոլադե կոնֆետներ Kinder (միայն բատոնչիկները, քանի որ երեխաները միայն դա են կարողանում հարմար բռնել)
- բիսկվիթ
- չոկոպայ
- կեքս
-խաղալիքներ, փայտյա խաղալիքներ-ձեռքի մկանները զարգացնող(մոտորիկա) (պլաստիլիներ, ալերգիկ երևույթները բացառելու նպատակով փափուկ խաղալիքներ չեն ընդունվում):
-տոնածառի խաղալիքներ

Մանկատունը օգնում է նաև անապահով ընտանիքներին, ուստի կարող եք ուղարկել նաև հետևյալ իրերը՝

-աթոռակ, մանեժ, քայլակ (կարող է լինել օգտագործված)
-մանկական հագուստ:
Մանկատունը գտնվում է Նորք-Մարաշ վարչական

շրջանում:
Փաստաբանների պալատից կամավորների խումբը մեկնելու է 2025 թ. դեկտեմբերի 23 -ին՝ ժամը 15:10-ին: Եթե ցանկանում եք մանկատուն այցելել, ապա խնդրում ենք նախապես տեղեկացնել:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել՝
հեռ. 098 09 29 07

Հարգանքով՝
ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ
ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })